

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:

Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և սոն՝ օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առօրեայ երեւոյթներէն, Հին ցարերից մէկը. Զանգեզուրի գաւառում. Նամակ խղիւղից. Նամակ փոթիկից. Նամակ Զաքարիայից. Նամակ խմբագրի. Ներքին լուրեր. Բարձրագոյն ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էրզրում քաղաքը. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒԿՆԵՐ. Հնու-Արարիկներ. ԲՈՐՍԱ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՈՐԵԱՅ ԵՐԵՎԱՆԵՐԻՑ

Տղտ ամբարն ամեն չարիք և ամեն զոհողութիւն կամ ատուածային անխտաւարի պատիժ է համարում, և կամ ինքն իրան սիրովում է ասելով՝ «ճակատիս այդպէս էր զրկած»:

Սարակ ժողովուրդը խոտարնութեամբ կրելով իր շինքին դրած ծանր լուծը, միմիայն արտաքին աստիճանով «այսպէս ծնւել էր, այսպէս էլ պէտք է մահանայ»:

Տղտ ամբարն և սարակ ժողովուրդը իրանց կեանքի մէջ տեղի ունեցած ամեն մի երեւոյթ զերեւական դժուր ձեռքէ՝ դուրս հանարելով, միանգամայն աւելորդ են համարում բոլոր և բոլորի ձայնը լսելու և իրանց նեղացնողներին, իրանց իրաւունքը բռնաբարողներին, իրանց աշխատածը ուտողներին դնել:

Սարակ, ազգա ժողովուրդը զոհոյթութիւն չէ յայտնում ոչ մի բանի դէմ իսկ որտեղ չէր կայ զոհոյթութիւն, այնտեղ չէր կարող լինել և եղած դժուրութիւնը փոխելու, կամ ուրիշ խօսքով, առաջադիմութեան ձգտում: Իսկ որտեղ չէր կայ առաջադիմութեան ձգտում, այնտեղ չէր կարող լինել և բոլորի:

Այդ մի ալիսիօմ է:

Բողոքը, լինի նա մի անհատի, թէ մի ամբողջ հասարակութեան և ազգի կողմից՝ նախ զիտակցութիւն և անհատ, և ապա մի գործը ստացողը, որ անհատի կամ ազգի մէջ հաստատուել է իր դրութիւնը բարեբաւութեամբ, որ անհատը կամ ազգը զոհոյթ է իր ներկայ կացութիւնից, և ձգտում է մի աւելի բարեբաւութեամբ և աւելի մարդկային դրութեան:

Երբ դարձեալ արեւացած և տղիտութեան մէջ խորատուգլած ժողովուրդը, մի կողմ թողնելով ամեն բանի առաջ խոտարնութիւն և ամեն չարիքի առաջ լուրի ստիճանութիւնը, սկսում է բողոքել և զոհոյթութեան նշաններ ցոյց տալ: Դա արդէն անհատիկներին փառս է, որ այդ ժողովուրդը հաստատ քայլեր է սկսում անել դէպի իր կեանքի և իր գաղափարների կերպարանափոխութեան գործը:

Դա էլ ալիսիօմ է:

Այդ բողոքը սկսում է երևան էլ գալիս փոքրիկ գործերի, մասնաւոր երեւոյթների մէջ և ապա քանի գնում, այնքան մեծանում է հասարակական բնաւորութիւն է ստանում: Նախ հարստահարութեամբ, փոքրութեամբ բողոքում է իր ազգի դէմ, ապա բողոք է սկսում երևան գալ մի վաշտաբուրի հարստահարութեան դէմ, ապա ուրիշ սկսում է բողոքել բնիկ դէմ, զրանից յետոյ մի ամբողջ համայնք բողոք է սկսում յայտնել վատ մէլքի, կամ ուրիշ դէմ, անցնում է մի առ ժամանակ, այդ բողոքը սկսում է արտայայտել հասարակական իրաւունքները ոտնահարողներին դէմ, մինչև իսկ վատ երեւոյթների վատ քահանայի կամ վարժապետի դէմ, և այդպիսով փոքր առ փոքր առաջ գնալով, անհատական բողոքը հասարակական բնաւորութիւն է ստանում, անհատից յետոյ հասարակութեան է սկսում բողոքել, զոհոյթութիւն ցոյցնել և իր իրաւունքները պաշտպանել: Վերջապէս զիտակցութիւնը այնքան հաստատանում է, որ բողոքը սկսում է հասարակական, ազգային ցոյց:

ցի կերպարանը ստանալ և պատահում են բողոքներ, որ համբերութիւնից դուրս բերված ժողովուրդը այդ ցոյցները անում է շատ կատաղի, շատ բռն և շատ թունդ ձեռք:

Այդ տեսակ բողոքները և այդ բողոքներից առաջացած ցոյցերը զիտակցութեան, ինքնաձեւաւորութեան նշաններ են, ապա ուրեմն միանգամայն համակրելի է:

Համակրելի են, այո, որովհետեւ այդ ցոյցները և բողոքները ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի մի դուրս փախուց, որ սարկացած, ազգա ժողովուրդը սկսել է ինքն իրան ճանաչել և հասկանալ, որ ամեն մի չարիք նախախնամութեան պատիժ է, և չէ ձեռնադրութեան պատժաւոր...:

Այդ հասկանալը արդէն առաջադիմութիւն է: Իսկ ամեն մի առաջադիմութիւն, այդ էլ ալիսիօմ է, և այդ ալիսիօման երեւոյթներն էլ զիտել, և համակրելի և ուրախալի է:

Խ. Մ.

ՀԱՆՐԱՊԵՏԱՐԹԻ ՄԵԼԻԿ

Թիֆլիսի հայ հասարակութեան հին ցարերից մէկը—հայոց թատրոնի հարցն է:

Թատրոնական սեղծութեամբ—սեպտեմբերը մասնաւոր է, և մենք բաղձալով հարցեր ենք ստանում զանազան անձինքներից, նոյն իսկ գաւառներից—որոնց թատրոնական կեանքի համար Թիֆլիսի թատրոն ուղեցոյցի դեր է կատարում.—թէ արդեօք սեպտեմբերից մենք թատրոնական խումբ պէտք է ունենանք, թէ արդեօք կարելի է յոյս դնել Գրամատիկական Ակումբի վրա, թէ արդեօք մի որ և է ջանք գործ է դրվում որպէս զի ներկայացումներ լինեն, թէ ոչ, և ուրիշ այդպիսի հարցեր:

Տարակուսանքի մէջ ենք ընկնում այդպիսի հարցեր ստանալով: Արդեօք սեպտեմբերից մենք թատրոն կուենանք.—ասում են բարձրաստիճանի մէջ սկսողները, իսկ հարցն: Թատրոն ունենալու համար կամ ինքը հասարակութիւնը պէտք է մտածել, կամ մի որ և է հիմնադրութիւն, որի կողմը լինել թատրոն պահել: Այդպիսի մի հիմնադրութիւն մեր մէջ Գրամատիկական Ակումբն է: Բայց զրա էլ «անունը կայ» ակումբն է: Մենք մինչև անգամ չենք հասկանում, թէ ինչու այդ de facto գոյութիւն չունեցող հիմնադրութիւնը սկսում է իր անունը միշտ հրապարակել վրա պահել, և այսպիսով հասարակութիւնը մի առանձին տարանջատութիւն ունի իր յոյսը ուրիշ վրա դնելու, մասնաւոր որ առիթ են առնել կարծելու, թէ կայ մի Ակումբ, որ մի բան պիտի չինի: Ակումբը ոչինչ չէ չինում, ոչինչ չէ ուղում չինել և ինքը հասարակութիւնը: Մեր հասարակութիւնը միշտ ուղում է թատրոն ունենալ, բայց աշխատել այդ տեսչանքին հասնելու համար.—նոր սովորութիւնից դուրս է:

Մենք միշտ ասել ենք և կրկնում ենք. հայոց թատրոնը այն ժամանակ հաստատ գոյութիւն կալու է ունենալ, երբ ինքը հասարակութիւնը իր սեփական միջոցներով, իր անմիջական նախաձեռնութեամբ ինքիքը հրապարակել վրա կը դնի և իր աշխատութեամբ զարկ կը տալ գործին: Իսկ եթէ այդ նոյն հասարակութիւնը միմիայն ունայն ցանկութիւններով բաւականանալով, ոչ կ'օգնի մշտական բան ունենալու գործին, ոչ էլ մի շօշափելու օգնութիւն կանի գործին զրուկ կանգնել չարիքի օգնութիւն կանի գործին զրուկ կանգնել չարիքը միշտ հարց կը մնայ:

Ասում ենք միշտ հարց կը մնայ, որովհետեւ հայոց բնիկ ծառայողներն էլ—մեր բողոք տաղանդաւոր և անտաղանդ գերաստանները միասին վերցրած մի այնպիսի ոյժ չեն ներկայացնում, որ կարելի լինի զրա վրա յոյս դնել, և ուղտել, որ զրանք կարող են իրանց ուսերի վրա տանել մեծ առկառնութիւնը: Այդ մարդիկ իրանքի վրա կրեցին է

այդպիսի մի ոյժ չեն ներկայացնում, որովհետեւ այդ տաղանդաւոր և անտաղանդ խաղացողները մինչև այժմ էլ չեն սովորել միասին գործելու, միասին աշխատելու, որովհետեւ այդ գերաստանները և գերաստանահիւնքը մինչև այսօր էլ չեն վարժվել առանց զիտաւորական գաւառների մի շարքով գործ կատարելու: Մի բան կը սկսեն, և իսկոյն էլ կը կուեն.—ահա հայոց բնիկ ներկայացուցիչները սովորական յատկութիւնը...:

Ինչ է դուրս գալիս այդ բողոքից—Հասարակութիւնը ինչն անմիջապէս գործին չէ կապում, մասնաւոր չորքով անձինք իրեն նախաձեռնողներ երևան չեն գալիս. իսկ իրանք գերաստաններ իրանց ոյժերով անկարող են մի բան անել:

Ուրեմն որտեղից կարող է լինել մշտական հայոց բնիկ Միթէ երկնքից պիտի իջնի նա, կամ թէ գետնից պիտի բուսնի: Հրապարակել, ի հարկէ, չենք հաւատում, բայց մոռնում ենք, որ սեպտեմբերը գալիս է...

ՀԱՆՐԱՊԵՏԱՐԹԻ ԳԱՆՈՒԹԻՒՄ

Առաջադիմութիւնները, չարագործութիւնները, բարեարարութիւնները և զարհուրելի մարդասպանութիւնները բաղձալով են մեր կողմնում: Երեւանի և Երևու խումբ աւաղաններ, որոնք իրանց աւարով և եղեռնագործութիւններով մեծ տարածի են ցցել անդէս ու խաղաղասէր բնակիչները վրա: Լուսն ենք, որ աւաղաններ մի խումբ անցել է Պարսկի սահմանից, իսկ միւս խումբը՝ Ղաթարի պիլծաններին մօտ դանդաղ թուրքաբնակ խաղաղ գիւղից է: Գրանք որ ցերեկով թաղանում, կուրսում և սպանում են ամեն մի անցնողին, այնպէս որ մեր գիւղերի ճանապարհներն անանցանելի են դարձել:

Սճա մի քանի սպանութեան դեպքեր: Մի ցեղայ ամսի 15-ին Նորաշենի գիւղացի երեք հոգի գնում են հունձ կրելու. վերադառնալիս, 7—8 վերստ հեռաւորութեան վրա Հաղարակ գիւղից, աւաղաններ մի խումբ յարձակում են գործում այդ երեք հոգու վրա, առնում են մօտ 21 ռուբլի փող, 8 հատ ջուր և չը բաւականանալով՝ այդքանով, սպանում են այդ երեք հոգու մէկին, իսկ միւսները փախչում են. նոյն աւաղանները կրկին կողոպտում են Կատկուի շինական տանու տէրին, Թիլից առնելով մի բնիկ փող, դօսին և չորսը արձակում են և իրանք անհետանում: Մի և նոյն ամսի 28-ին միւս աւաղանները գիւղեր մանկով Գաղարտ գիւղի, մի քանի անգամ հրացան են արձակում նոյն գիւղացի մի հայ երիտասարդի վրա, որը ստանում է երկու տեղից վերջ ալ թիկ վրա. հիւանդը դրութիւնը չէ կարելի աւել, որ լաւ է: Այնտեղ անհետանում են իր թէ աւաղանների մէկի կինը երիտասարդի հետ սերտ յարաբերութիւն է ունենում. մարդը տեսնելով այդ, սպանում է հրացանի գնատով իր կնոյ՝ և վրէժը առնելու համար, գիւղը մտնելով հայ գիւղը՝ միաւորում է երիտասարդին: Այդ դեպքը պատահելուց յետոյ կես. Միգրի բաժնի պօլիցիական սրբապետը, ասում են, որ դեռ այդ աւաղանները շատերից վրէժ պէտք է առնեն: Պօլիցիական սրբապետը իր մասերում մարդիկ էրեւ, իսկ մեր կողմնում դեռ ոչինչ զգուշական միջոցներ ձեռք չեն առնված: Մեր կողմերի հայ բնակիչներն առհասարակ դուրի են մի որ և ինչ զէնք կրելու սովորութիւնից, իսկ թուրքերի գիւղեր թէ մանկ, ամեն մէկի մօտ կը գտնվէ զբերքանիք» կոչված հրացանը. ուստի լաւ կը լինէր իրենց պ. գաւառապետը թուրքաւորներ և մեր գիւղացիներին կրել նոր կատարելագործված զէնքեր, որպէս զի հնար ունենալին իրանց անձը պաշտպանելու այդ աւաղանների դէմ:

Հաղարակ և Բաղարակ գիւղերում փոքր երեւոյթներ վրա կրեցին է «բոլորէ» հիւանդութիւնը, որը բաւական երեւոյթներ է փչացրել: Առհասարակ ցանկալի կը լինէր, որ երբ մի որ և է գիւղում երևում է տարախիտիկ հիւանդութիւն, տանուէն անմիջապէս իմաց տար սրբապետը, վերջինը—գաւառապետին և ապա բժշկական կառավարութեանը կամ Գորիսի գիւղական բժշկին. իսկ որովհետեւ մեր տանուէրները մի որ և ինչ գաղափար, հասկացողութիւն չունենալով տարախիտիկ հիւանդութեան վրա, իմաց չեն տալիս, իսկ երբ որ հիւանդութիւնը յաղկում է Գորիսի գիւղական բժշկի աւագ օգնականը. սա գալով ձեռնամուխ է եղել ամենախիտ միջոցների, զերաւորապէս աշխատում է առողջներին հետաքննել, առանձնացնել հիւանդներից և այդպիսով այժմ հիւանդութիւնը մեղմանում է և չուտով կը վերջանայ:

Այս տարի մեր կողմնում հունձ լաւ է. մերեւին այս կողմնում էլ էր երեւցել, բայց վնաս չէ հասցրել: Գիւղացիների ասելով միւս տարին կը շատանայ. գիւղացիներն այժմանից գոչաւորում են իրանց անեղանկի դրութիւնը:

Գիւղացի

ՆԱՄԱԿ ԻԳԻՐԻՑ

Յուլիսի 10-ին

Իւրաքանչիւր տարվայ ազգաբնակչութեան աճումը, հողերի հետզհետէ պակասելը, որպէս կենսական խնդիրներ առաջ են մղում գիւղացուն իր ոյժը կանգուն պահելու համար՝ ձեռնարկել զանազան միջոցների: Այն, որ մեր ժողովրդի համար առաջնորդ երկրորդական էր և մինչև անգամ արհամարջված միջոց էր անցնում, այժմ նոյն միջոցը նախապատել է համարվում, որպէս անհրաժեշտ կարիք գործադրելու ժողովրդի գիւղատնտեսական կենսական:

Ժողովրդի համար նոր է պահանջ դարձել այն գիտութիւնը, որը հնչողացնում է հողային կուլտուրան, որը սովորեցնում է քիչ օգտվելու և քիչ շատերին կերակրելու եղանակը. սոյն այս պահանջը ներկայումս իւրաքանչիւր գիւղն ունի. իւրաքանչիւր տուն և անհատ ժամանակի այդ պահանջը դրում է: Բայց ինչ միջոցներով և ինչպէս կարող է գիւղացին ձեռք բերել այդ կենսատու գիտական արուեստը. այդ նրա համար գոյուր է և երկար ժամանակի կարօտ մուկ խնդր է մնում, հետեւապէս գիւղացին այդ հարցը իր կեանքի շրջանում համարելով որպէս իր նախաձեռնից դուրս և անգործադրելի պայման, թողնում է առանց հետեւանքի: Նա գիտէ իրական միջոց. հասարակական համայնքը կազմում է համայնական միջոց և գիւղական տանուտէրի կնքով հաստատված իւրաքանչիւր տան ստորադրութեամբ մի խնդրագիր ներկայացնելով կառավարութեանը, թուում է ժողովրդի շատութիւնը, սպորտսի դժուարութիւնները հողի պակասուածութեան պատճառով և խնդրում է նոր տեղ նշանակել գիւղից տեղափոխվող մի որոշ թուով բնակիչները բնակութեան համար: Հասարակութեան առաջարկած համայնական միջոցով կազմած խնդրը, կառավարութեան թուրքաւորութիւնից կախումն ունի. եթէ խնդրը ստանում է իրականութիւն, խնդրատու գիւղացիների պահանջին համեմատ, խնդրատու գիւղացին տեղափոխվում է նշանակեալ բնակատեղը. այսպէս հետզհետէ շատանում է գիւղերի թիւը, որոնք տարիներից յետոյ, սնուց աճեցողութեան շնորհով, զարգեալ նոյն բողոքը կը շարունակեն և նոյն դրութիւնը կընդունեն, իսկ գիւղատնտեսական գիտութիւնը կրկին կը մնայ անգործադրելի միջոցի մէջ:

Օրինակներ չառնեն. Ստրանուր գաւառի իւրաքանչիւր գիւղ այս կէտի վրա կանգնած տարու-

երկրում է: Տաշատուտն գիւղը Ստեփանուի միջ
գիւղերից մէկն է, ընտանիքներ ընդհանրապէս
աշխատաւոր, երկրագործ, կենդանի և առողջ
ընտանոթներն ունեն. ամենաթանկէն համեմատու-
թեամբ կարելի է ասել, տաշատուտցիներ Ստեփա-
նուի գիւղերէն է, բայց ստորաբազմաբար այդ
տեսակ աշխատ ժողովուրդը ամեն կերպով անձակ
է մնացել, մատաղ սերունդի մասեր կրթութեան
և դատարարութեան գործը բարձրորդին յանձնված
է եղել ազատ խալիֆաների ընթացող սկզբունք-
ներին, նրանց հակոթութեան և խնամքին: Տաշատու-
տցիները զգալով հողի պակասութիւնը, և չը
կարողանալով ոչ մի աշխույժ ելք տալ իրանց գրու-
թեան, հասան հետեւեալ եզրակացութեանը. 40
տուն միասին խնդրամատոց կզան կառավարու-
թեան նշանակել իրանց համար, որպէս բնակա-
տեղի, Մասին սարի կրծքի վրա գտնված Ղոր-
դան կոչված տեղը, համայնաւ անտառի մօտ:
Այդտեղ ամենատաւառ մշակելու հողեր կան,
անտառ և ջուր, այնպէս որ կարելի է հեշտու-
թեամբ ստանալ կենսի բաւականութիւնը. Ղոր-
դանում երբեմն ամառային երեք չոր ամիսներին
երեւում են քրդերը իրանց վրաններով և ոչխարի
հօտերով: Տաշատուտցիները իրանց ընտրողու-
թեան մէջ չեն սխալվել, չը նայելով որ Ղորդան
մինչև այսօր ծառայել է որպէս աւաղակային
խմբերին պատուպարան, այնու ամենայնիւ տաշա-
տուտցիներ այդ հանգամանքներից չէ վախճում. նա
իրան գիտէ և իր գոյութիւնը պաշտպանելու
չափ ուժի: Տաշատուտցիներ այդ մտքին չէր
տիրանայ երբեք, եթէ հողային պակասութիւնը և
քաղցը թուլացնելու չափ չը ճնշէին նրան:

Ղորդանի շրջակայքում գտնվում է հայոց հին
Արշակունիքը իր աւերակների դարեր մնացորդ-
ներով:

Մ. Ս.

ՆԱՄԱԿ ՓՈԹՈՒՅ

Յուլիսի 15-ին

Քաղաքի տանտարական դրութիւնը բաւա-
կան գոհացուցիչ վիճակի մէջ է, շնորհիւ տեղա-
կան բժիշկների: Քաղաքային բժիշկ Ն. Տէր-Նի-
կողոսեանը օրումէջ այցելում է մտակաճանքների և
մրգավաճառների խանութները, անձամբ քննում
է միւր և արդելում է խալ պտուղները վաճառե-
լու:

Մեր վաճառականութիւնը զանազա վիճակի
մէջ է: Արտասահմանից եկած աւերական ֆիր-
մաներ շատ են եղել այստեղ, օրինակ 1885
թ.ին, հայաստանից եկած արտասահման Ժամա-
նակ: Բայց և այնպէս նրանց մեծ մասը չը կար-
ցանք քոյութիւնն ունենալ, իրանց կրած մեծ
մեծանքի պատճառով: Հետեւեալ ստաբիլիտե
կրկին մնաց յոյն կոմիսիոներներին: Սիմիոնի
վաճառահանութիւնը յոյների ձեռքին է գտնվում,
խալ քարածուխի և մարգարիտի արտահանու-
թիւնը անդլիանցիների ձեռքին: Վերջինները մա-
սամբ արտահանում են և ընկողի կոճղը և չիմ-
չիւր փայտը: Խալ հայ ֆիրմաներ ամենին չը
կան: Մի ժամանակ եղել են մի քանիներ, յա-
րաբերութիւններ պաշտպանած լինելով արտասահ-
մանի հետ, բայց նրանք հեղհեղ ընկան, գոր-
ծերը պակասեցրին և վերջը կատարելապէս ան-
հետացան:

Թէև այդ տարի սիմիոնի գինը անցեալ տարի-
ների հետ համեմատած՝ շատ պակաս է, բայց
կրկին արտահանում է զգալի արտասահման և
գլխաւորապէս յոյն վաճառականների ձեռքով:
Քարածուխը և մարգարիտը ոչ թէ միայն անդլիա-
ցիների ձեռքով, բայց և անդլիական նաւերով են
արտահանվում:

Անցեալ շաբաթ սպանիական ափերից տեղա-
հասած յունական մի նաւ իրաւունք չը ստացաւ
փոթիւմ խորիսի գցելու, քանի որ Ազանիա-
յում տարածված է այժմ խորհրդ հրահանգութիւնը:
Նաւը յետ դարձրին Բաթում, այդտեղ կարանտի-
նային հակոթութեան ենթարկվելու համար:

ՆԱՄԱԿ ԶԱՔԱՌԱՅԻՅ

Յուլիսի 18-ին

Սիւնի 15-ին թատրոնային բեմի վրա խումբ
տուեց ներկայացում յօգուտ տղայոց ուսումնարա-
նի մանկական դրամային խմբի: Ստե-
փանիանցի «Էլի մէկ գոհ» կոմիկիան և վերջին էլ
եղաւ խմբովին երգ: Ներկայացումը և երգը շատ
կենդանի անցաւ, ժողովուրդը վարձատրում էր

սիրողներին անընդհատ ծափահարութիւններով:
Թէև ժամը 11-ն էր, բայց էլ չէին կամենում
հեռանալ դահլիճից:

Սիրողները իրանց դերերը բարեկեցութեամբ պատ-
րաստել էին: Շնորհակալութեան արձանի են մատ-
նակցող տիկիները և օրիորդները, որոնք թէև
ստաշին անգամն էր, որ բնւ էին դուրս եկել,
բայց բաւական ազատ էին պահում իրանց բնւի
վրա և խաղում էին եռանդով: Նրանք խնամով
արքին ազատ ժողովուրդի ազատ կարծիքները և բամ-
բասունքները և բարձրացան բնւի: Յուսով ենք, որ
այսուհետև ևս նոյն եռանդով կը կուսեն խաղար-
դէմ և իրանց ուժերը չեն խնայի հաւարակու-
թեան օգտին գործադրելու:

Զարթարայում այդպիսի մի ներկայացում ա-
շխույժեցնելու մեծ գործ կատարել է նշանակում,
որովհետև մեր ժողովուրդը թաղանթ «օյնեղութեան»
է ընդունում և խաղացողներին էլ «օյնե-
րանք»: Մեր այստեղի վաճառականներ իւրաքան-
չէր երկուց ուրախութեամբ լսել խնայողները կը
չպարի կանաչ սեղանի վրա, խալ բարեկեցութեան
նպատակով ներկայացումն մի կօպէլ իր կամով
չի տալ: Սիրողները տախտակ են ներկայացում
մի քանի օր առաջ փողոցում խանութից խանութ
պտուղ և տոմսակները բաժանել: Այդ դեռ. բա-
ւական չը համարելով, մեր վաճառականներ ամեն
մի քաղաքային վրաւորում է սիրողին «օյնե-
րա» անուանելով, կամ առաջարկում է «էր օգ-
տին» խաղալ, կամ ներկայացումն զիջելը դնում է
ճանապարհորդութեան, կամ մի հնարք է մատ-
չում ներկայացումը ձրի տեսնելու: Մեծ եղաւ
զարմանք, երբ վերջին կրկնութեան օրը մի հա-
րուտ վաճառական իր օրդու հետ եկաւ և երկ-
րորդ օրը այլ ևս տեսնել չը վերցրեց, ասելով
«ես տեսել եմ, եթէ ուզում էք 50 կօպէլ առա-
ցեք, մենք երկուստ (ինքը և օրդուն) այլ ևս չենք
զայ, ուրիշին կօպարիմ»: Երեւի մտածում էր
զրանում էլ մի քանի կօպէլներ աշխատել...

Ներկայացումից արդիւնք է եղել 80 ր. 37 կօ-
պէլ, որից դուրս գալով 25 ր. 5 կօպէլ ծախս,
զուտ արդիւնք է մնացել 55 ր. 32 կօպէլ:

Վերջացնելով յօդուածն ցանկանում եմ թա-
րոնաւորներին եւսանդ և աշխույժութիւն: Թատրո-
նայինները մտադիր են նորից մի ներկայացում
ստալ յօգուտ ուսումնարանի վերանորոգութեան:

Հ. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՐԿԻՆ

Կարս, 18 յուլիսի

Ձեր պատուական թերթի № 74-ում գեղեցիկ
էր «Կարսի տանտարական դրութիւնը» խորա-
զրով մի յօդուած, որի հեղինակը, ըստ երեւոյթի,
խուսապիւրով այն անտարբերութիւններից, որոնք
կարող էին առաջ գալ իր զրախոտութեան հա-
մար քոյարկված էր երեք աստղերի տակ: Այդ
գրութիւնը նեղ անձնական կրքի կամ գիտում-
ների արգասիք համարելով, ես, որպէս մօտիկ-
ծանօթ երկրորդականը՝ պարզ սեղեցի լինձ ճշար-
տութիւնն ասելու և իրողութիւնը պարզելու
համար, մի քանի խօսք յուսելով, յատկաւ որ չէք
մերժի, յանուն արդարութեան, մի անկիւն հնոր-
հեղ գրութիւնն «Մշակի» առաջիկայ համարներից
միւնում:

Պարոնը մասնաւորելով իր խօսքը քաղաքիս
առաջին մասի տանտարական հոգաբարձու պ-
Բաւալ-էջ Ալի-իւզովի գործադրութեան նկատ-
մամբ, ասում է, որ իր վերջին փոխանակ ժո-
ղովրդին բաւարար չապացնելու անմարդկա-
կան ճանապարհը սկսել է արձանագրութիւններ
կազմել և ուղարկել հաշտարար դատարարին,
նրանց պատշաճաւոր պատմի ենթարկելու: Առեմ
ուրեմն, խօսքից ճարտարան լուրը ստանալուն
պէս, Կարսի նախագահաւոր աճապարեց ապա-
զայ չարքիւն առաջն անհետ համար հնարաւոր
միջոցներ ընդունել և իր յատուկ նախագահու-
թեամբ կազմել մի առանձին մանուսքրիթ, որը
ամեն կերպ քննելով ժողովուրդի կենցաղավարու-
թիւնն ու քաղաքային օրի արարկանութեան
նպատակով պայմանները, կայացրեց իր օրոշումը
ընդարձակ գրութեամբ, առաջ բերելով այն ան-
հրաժեշտ միջոցները, որոնք կարող էին յիշեալ
ախտի տարածման առաջը փոքր ի շատէ առնել:
զրան հետեւեց նաև առանձին հրահանգ թէ ուսու-
նարական հոգաբարձուները և թէ վերահսկողնե-
րի վերաբերմամբ: Սրանից յետոյ քաղաքիս օտու-
կանային՝ փոխ-գնդապետ պ. Լեւիցկի երկու
անգամ հաւարակական խառն ժողով ունեցաւ
ուսուխանատան մէջ, ուր առաջին անգամ հանգա-

մանօրէն քայքայեց խմբած ժողովրդին անմար-
դութեան հետեւեալ մասին, իսկ երկրորդ ան-
գամ, վերահսկողներ ընտրվուց յետոյ, հասկացրեց
վերում յիշված արձանագրութեան և ծրագրի ի-
մատող, ժողովրդի և առողջապահական վարչու-
թեան փոխարք յարաբերութիւնները, և այլն,
միանգամայն պատրաստելով նրանց, հարկաւոր
զէպքում, մագրուելու այն պայմանակ հրեշի գէմ,
որ իր աճման համար պարարտ հող գտնելով՝ կա-
րող էր ստիպել զոհեր ունենալ...

Նախագահական վարչութիւնից կազմած ծրագրի
համաձայն, տանտարական հոգաբարձուն երբ նկա-
տի որ և է անմարդութիւն, պարտաւոր է ոչ մի-
այն բանաւոր, այլ և առանձին ծանուցադրով
աղաքարքել կառածի տիրջը, որ նա օրոշեալ
ժամանակամիջոցում մագրել տալ կուտակված
աղքը. իսկ եթէ վերջին յապաղի կամ հրաժարի
խաղաւ կատարելու այդպիսի առաջարկութիւնը,
այն ժամանակ հոգաբարձուն, վերակացուների
հետ միասին, մագրել է ապիւս կեդրոնութիւնը
և արձանագրութիւն կազմելով, ծանուցադրի եր-
կրող օրինակի և ծախսի փաստաթղթերի հետ
միասին, ներկայացնում է դատաւարական վար-
չութեան անօրէնութեանը:

Օրինակելի ճշգրտութեամբ կատարելով իշխանու-
թեան հրահանգութիւնը՝ այսպէս վերաբերվեց պ.
Ալի-իւզովի Պետրոս Դիւնալի, Սալվաթի, Համի-
Մուլա-Ալիի և Բաւալիի հետ, որոնցից առաջին
երեքը քաղաքիս առաջին մասում քաղաքային
ներ ունեն ասանց արտաքնները և աղքատու-
նների, որոնց մէջ կամ չըլլալուց անորոշ ժա-
մանակներից զարչելի անմարդութիւն է թաղա-
ւորում: Իսկ չորրորդը՝ ունենալով զարեջրի գոր-
ծարան, սակաւ չէ նպաստում օրի ապականու-
թեան, իր արդիւնաբերութեան այլ և այլ միա-
ցօրոնների փոխելով, մասնաւոր ուր գործարանը
զրկած լինելով քաղաքի հետաւոր ծայրում, Կարս
գետի ափին, իր անմարդութիւնների հոսանքով
ապականում է ամբողջ աղքատակութեան ջուր
մատակարարող գետը:

Դիւնալի պէտք է ասնեք, որ պ. Դիւնալի
բնակարանը գտնվելով քաղաքիս 2-րդ մասում,
ազատ է Ալի-իւզովի իրաւասութիւններից, ուրեմն
և զլիւրդիս սուտ է յօդուածագրի արտաշը թէ
բնակարանի ազատութեան առիթով արձանա-
գրութիւն է կազմել. դառով քաղաքային արտաքններից
և զարեջրի գործարանից դուրս հանված աղբին,
ինչու առատութեան և համարում աղբի սպիւրի
310 թիւը, որոնք, իր տեսակետով, բւււււր պէտք
կազմելիս լինելին... Ողորմելի լուցիկ... 310 սալ
աղբ դուրս տանել ահագին շինութիւնների միջից
և շրջակայքերից և այն, ինչպէս ասեցինք, եր-
կար ու ձիւց տարիներ ընթացքում կուտակված,
միթէ այդքան անհաստատելի է թուում պարոնին,
իսկ թէ ուր են նրանց բլուրները, խորհուրդ ենք
տալիս պարոնին դուրս գնալ քաղաքի շուրջը և
օրոշած տեղերում ակնառասիւ լինել հաղարար
ապրիւրով զրկված աղբին, որը, այնու ամենայնիւ,
իր երակալածը բււււր և բւււր չէ կազմում:

Առնալու պէտք Կարսի տանտարական կառավա-
րութեան խաչատուր Ամիրեանց

ՆԵՐՈՒՆ ԼՈՐԻՆԻ

Յուլիսի 22-ին, թագուհի Կայսրուհու անուա-
կուտութեան օրը թիֆլիսի զանազան դատաւո-
րութեան եկեղեցիներում կատարվեցան գոհացու-
կան մաղթանքներ: Քաղաքը զարդարված էր դը-
րօշակներով, իսկ երեկոյան լուսաւորված էր:
Թագուհի Կայսրուհու անուանակոչութեան առի-
թով Պետերբուրգից «Հիւսիսային գործակալու-
թիւնը» մեզ ուղարկել է հետեւեալ հեռագիրը.
«Երկ թագուհի Կայսրուհու անուանակոչութեան
առիթով տեղի ունեցաւ Բարձրագոյն ելք՝ ներ-
կայ լինելու համար Պետերբուրգից Մեծ պալատի
կեկեղեցում պատարագին և մաղթանքին: Արեւի-
յան, ահագին բազմութեան ներկայութեամբ,
Պետերբուրգի պարկի շատրուանները չեղ կերպով
զարդարված էին. տեղի ունեցաւ և փառաւոր
հրահանգութիւն»:

ԿՕՁՕԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 22-ին,
Նորին Կայսերական Մեծութեան թագուհու Կայս-
րուհու անուանակոչութեան առիթով, իզական
խնայաւորաւոր պարահանդէս կար, որի ժամանակ
հաւաքում էր գիւտարական երաժշտութիւնը:
Խնայաւորաւոր այգի և նրա սու զն գտնված դաշար
գոյնգոյն լայտերներով էին լուսաւորված: Մինչև

ուշ գիշեր խնայաւորաւոր շրջապատող փողոցնե-
րում զրաւնողներ մեծ բազմութիւն կար»:

Ինչպէս հաղորդում է «Новое Время» լրագիրը
այժմ վճռված է թող տալ, որ Պետերբուրգի
թիֆլիսյան ակադեմիան ընդունին և այնպիսի
ուսանողներ, որոնք իրանց գիւտարական ուսումը
աւարտել են ոչ թէ միայն Պետերբուրգի շրջանի
կրտսեական գիւտարականներում, բայց և Կայսրու-
թեան բոլոր միւս շրջանների կրտսեական գիւտա-
րականներում:

Անդրկովկասեան կրթութեւոր ապրանքային
գիւտարակների թիւ պակասեցնելու պատճառով եր-
կաթուղու վարչութիւնը վճռել է օգոստոսի 1-ից
սահմանափակել երկաթուղու կոնդուկտորներ և
մեքենայեանների թիւը: Առաջինների թիւը կը
պակասեցնվի 300 հոգով. իսկ վերջինների, այ-
սինքն մեքենայեանների և նրանց օգնականների
120 հոգով:

Տեղական ուսու լրագիրները հաղորդում են,
թԱՊՈՒՍ քաղաքային վարչութիւնը զբաղված
այժմ քաղաքային ջրանցք կառուցանելու հարց
մշակութեամբ: Գիւտարակների կայ քաղաքի
ընտանիքների համար խմելու ջուրը անցկացնել
քաղաքի մօտակայ աղբիւրներից: Մասնաւորաւոր
են հրաւիրված այդ հարցը քննելու համար:

Ստացանք Կ. Պոլսում հրատարակվող Պատկեր
կիտանակ հանդէսի առաջին 6 տարականը
Հանդէսը գիտաւորութիւն ունի կրել կրօնական
և գիտական բովանդակութիւն: Տպւում է Գաթ-
լին Պաղատաւեանի տպարանում: Առաջաւոր
տեղեկանում ենք որ Պատկերը հանդէսը գա-
լում է Կ. Պոլսի հայ-կաթիլի պատրիարքի հով-
նաւորութեան տակ, ուրեմն լինելու է հայ-կաթի-
լիներ օրդան: Խաղաղութիւնը իր առաջաւոր
նում անասելի զովաւանդներ է չուղարկում սոյ
թմանի և պարտիքը Աղաբանի անօրինակ իմա-
տութեանն ու հանձարին: Հանդէսը սկսել է լր
տեսնել ներկայ 1890 թ.ի սպրիլ ամիսից և շա-
մաբուր է տպւում: Լեզուն, ի հարկէ, նոյնքան
անճոռնի է, որքան անճոռնի է և Կ. Պոլսի մի-
հայոց հրատարակութիւնների լեզուն, մանաւան-
կաւ ուղում են ծաղկած կամ ուսումնական ուն-
արտաշայտել իրանց մտքերը: Տառադարձութիւն
անպիտան է. Գ.ա.ն.տ.է.ի տեղ հանդէսը գրում է
Տ.ա.ն.դ.է. և այլն:

ԱՐԿԱՆԱՆԻՑ մեր լրագրին գրում են. «Սիւսի
յուլիս ամիսից մի քանի գիշեր շարունակ գող-
ութիւններ են պատահում մեղանում: Զարմանալի
որ Արդանի պէս մի աւանում գողութիւններ
և ուրիշ տեսակ անկարգութիւններ առել յաճա-
կ են պատահում, քան թէ օրինակ, Կարսի պ-
քաղաքում: Գարմում ենք տեղական վարչու-
թեան ուղարկութիւնը այդ հանդամանքների վր
Արդանի փողոցներում կեդրոնութիւնը սպա-
փելի է. ամբողջ աւանում ոչ մի հատ արտաքն
չը կայ, բայց պոլիցիայի մօտ, բանտարկվածներ
համար չլինած արտաքններից: Փողոցները բոլ
էլ իրողութեան են, բայց այն ուղից, որտեղով
նում է դաւաճապետը. մագրու է նաև կամուր-
ուր ամբողջ հասարակութեան և գիւտարակ
ների զբօսաւայրն է: Ուրիշ փողոցներում աղբ
կեկեղանքը ամբողջ բլուրներ են կազմում, տալ
ների ընթացքում զրկված լինելով»:

Զանազան կողմերից մեզ գրում են, տեղեկա-
թիւններ խնայելով այն անցքի մասին, որ տեղ
է ունեցել նախամիջին կիրակի օր, Կ. Պոլսի
հայոց եկեղեցում, և որի մասին «Հիւսիսային
գործակալութեան» հեռագիրը մի կարծ լուր
բերել: Մայրաքաղաքի լրագիրներում այժմ տալ
գրված են հեռագրական մի քանի տեղեկութիւն
ներ այդ անցքի մասին: Մենք անկարող ենք
և է մանրամասնութիւններ հաղորդել:

Մեկ հաղորդում են, որ հոկտեր իշխանութիւն
կարգադրութիւն է արել հայոց դպրոցներում
ւաղ ուսուցիչների պաշտօնները տալ նրանց
րոնք աւարտել են էլմիւսանի Գեորգեան
րանում:

Մի քանի դատական քաղաքներից մեզ հա-
ղորդում են, որ տեղական ինտելիգենտ անձնեք
պատրաստութիւններ են տեսնում հիմնելու մ-
ղովրդական է ժ ա ն ա գ ի ն գրադարաններ:

